



Երևան, 1 Փետրուար, 2021

ՏԵՐՈՒԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմասպութիւն Հօր Յիսուս, փուր ինձ իմասպութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 34

ԳՈՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Անդադար Տէրը պիտի օրինաբանեմ.

անոր օրիներգութիւնը շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ:

Տէրն է միակ պարծանքս.

Ես Տիրոջ դիմեցի, եւ աղօթքիս պատասխանեց,

զիս ազատեց բոլոր վախերէս:

Տիրոջ մօփեցէք, որպէսպի ուրախութեամբ ճառագայթէք,

եւ յուսախաբ չէք ըլլար բնաւ:

Ճաշակեցէք, եւ դեսէք՝ թէ ինչքան քաղցր է Տէրը.

Երանի անոր՝ որ Տիրոջ կ'ապաւինի:

Հզօրագոյն մարդիկն իսկ կարօփութեան

եւ անօթութեան կրնան մատնուիլ,

սակայն Տիրոջ դիմողները բանի մը կարօպ պիտի չմնան:

Եկէք, որդեակներ, մտիկ ըրէք ինծի,

եւ ես ձեսի սորվեցնեմ՝ թէ ինչ է Տիրոջ վախը:

Կ'ուզե՞ս երկար կեանք ունենալ,

կ'ուզես բարօր օրեր դեսնել.

լեզուդ չարախօսութեան մի ծառայեցներ,

շրթներդ բնաւ թող նենգութիւն չխօսին:

Հեռու մնա չարիքէն, եւ բարիք ըրէ,

խաղաղութիւն կամեցիր եւ զայն հեղապնդէ:

Տիրոջ աչքերը արդարներուն վրայ կը հսկեն,

ականջները միշտ պատրաստ են անոնց աղաչանքը լսելու:

ՀԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, առու աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց ալքայութիւն:

Արի Աստուած Հարյուն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսոս Փրկիչ մեզ ողորմեա:

ՕՐՈՒԱՆ ՆԻԹԸ

ՀՀ

ԱՌԱԿԱՑ

1:1-6

ԱՌԱԿԱՆԵՐՈՒՄ ԱՐԺԵՔԸ 1:1-6

²ռաջին իսկ բաժինով Սողոմող իմասպուն ներածականով մը կը ներկայացնէ առակին արժեքը, եւ այդ առակի ճամբով փոխանցելու իմասպութիւն եւ խրափ: Անհրաժեշտ է նաեւ գիրնալ թէ քարբեր բան է իմասպութիւնը եւ քարբեր բան՝ գիրութիւնը: Բառերը ինքնին ցոյց կու փան, մէկի պարագային, իմասպութիւնը, իմասպը գիրնալ ու հասկնալ, իսկ միւսի պարագային՝ գիրնալ: Ամրող միփք բանին Սողոմոն իմասպունին այն է, հասկնալու իմասպը կեանքի դրուածքին ու նպագակին, բայց այս բոլորէն վեր ճանչնալու իմասպութիւնը, որ այս պարագային, Պողոս Առաքեալի բառերով նոյնինքն Յիսուս Քրիստոսին, ինչպէս պիփի ըստ Կորնթացիներու նամակին մէջ, »Մենք խաչուած Քրիստոսը կը քարոզենք, որ զայթակղութիւն է Հրեաներուն համար եւ յիմարութիւն՝ հեթանոսներուն համար, թէպէս նոյն այդ հրեաներէն ու յոյներէն կանչուածներուն եւ դարձի եկածներուն համար՝ անիկա Քրիստոսն է, Ասքուծոյ զօրութիւնը եւ Ասքուծոյ իմասպութիւնը« (Ա Կորնթ 1:23-24):

Հետաքրքրականօրէն, ինչպէս անցեալ անգամ ըսուեցաւ, որ Առակաց գիրքը նաեւ ձեւով մը բանասպեղծական ոճով գրուած, փոքրիկ նախադասութիւններով որպէսզի աւելի դիրիխ մփքին պահելու նպագրակով: Տեսք ինչպիսի գրամաքանական կառուցուածքով կը նթանայ: »Իմասպութիւնն ու խրափը գիրնալու, այսինքն՝ ճանչնալու, Հանձարին խօսքերը հասկնալու համար, իմասպութեան կրկնութիւնը ընդունելու համար«: Ճանչնալ, հասկնալ եւ ընդունիլ: Իմասպութիւնը, որ այս պարագային Քրիստոսն է, պէտք է ճանչնամ զԻնք, բայց ինչպէս կրնամ զԻնք ճանչնալ, եթէ ոչ Ինքինք յայգինելով ինծի: Անոր համար ալ Քրիստոս աշխարհ զալով Ինքինք ճանաչելի դարձուց եւ առաել եւս աշխարհ զալով ճանչցուց թէ ով է Հայրը: Պողոս Առաքեալ պիփի ըստ: »Որդին, Հօրը փառքին լոյսը եւ անոր եռթեան ճշմարիփ պավկերը« (Եքր. 1:3): Նաեւ Իր աշխարհ զալով փալու մեզի իմասպութիւն հասկնալու Իր խօսքերը, մանաւանդ այն խօսքերը կապուած կեանքի ու մահուան, որ հասանելի ու հասկնալի չեն մարդ արարածին, բայց Ինք եկաւ Իր կեանքի օրինակով մեզի փալու այդ բոլորին իմասպն ու խորհուրդը: Իսկ վերջին արդայայգութիւնը՝ »իմասպութեան կրկնութիւնը ընդունելու համար«, այսինքն՝ հարցնել եւ քննել ըսուած խրափը, որովհետեւ յաճախ, մանաւանդ խրափի պարագային դժուար ընդունինք, որ շափ յաճելի չեն մարդուս համար, մանաւանդ երբ մարդը աւելի հեշտասէր է, դիրիխ բաներ կ'ուզէ: Իսկ խրափի պարագային երբ ըսուած խօսքը կրնայ նախ չհասկցուիլ, կրնայ ցաւցնել: Անոր համար ալ, կրկնութեան գնով Սողոմոն իմասպուն այդ փոքրիկ ներածականով կու զայ ցոյց փալու օգբակարութիւնը առակին, խրափին. »Ճանչնալու իմասպութիւնը եւ խրափը, իմանալ բանականութիւնը, սորվիլ ու հասկնալ խօսքին իմասպը, հասկնալ թէ ինչ է ճշմարիփ արդարութիւնը. ուղղել իրաւոնքը գործով. խորագէտ ըլլալ, այսինքն՝ հեռաւոր բաները իմանալ. միփք եւ խելամութիւն սպանալ. իմասպունը աւելի իմասպուն ըլլայ. խելամութեամբ նաեւ առաջնորդ ըլլալ, ուրիշներուն օրինակ ըլլալու համար: Խորաթափանց ըլլալ առակներուն եւ իմասպուններուն խորին ճառերուն մէջ:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի պուէ եւ ի գիշերի,
ի նսպիլ ի փան, ի զնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: